

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևավայրով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share — copy and redistribute the material in any medium or format**

**Adapt — remix, transform, and build upon the material**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՏԵՆԱՅԱՐ Թիկ 1

ԴՐԱԿ Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

# ԶԵՐՄԱՄԻՉՈՒԹԻՒՆԸ

(ՊԵԼ ՍՈՂՈՒԹՎՈՒՂՈՒ)

«Գիտենի ե՞ր կը սկսի — Ասուած  
զիտ ե՞ր կը վերջանայ»

Ա. Բ. ԲՈՅ



616.9

Մ-16

ԽԱԳ. ՍԱՆՑԱԳԵԱՆ — Կ. ՊՈԼԻՆ

1931



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

01  
ՀՎ-ՀԸ1

Զերմամիզութիւնը (*chauve-pisse*, Պէտ սողություղու) վեներական ախտ մըն է եւ կը կոչուի նաև Տաքշեռ, Վազուք (*coulante*), Ծորախտ (*blennorrhagie*), Կոնաւոր միզանցահոսում (*gonorrhée*), Միզանցաբորբոքում կամ Միզանցատապ (*urétrite*), Սուսունակ եւայն:

Դժբախտ անտարբերութեամբ մը, վեներական ախտերը եւ մասնաւորաբար զերմամիզութիւնը պարզ, հասարակ եւ առանց գէշ հետեւանքի հիւանդութիւններ նկատուած են հասարակութեան մեծամասնութեան կողմէ:

Զերմամիզութիւնն ալ ֆրանկախտին եւ թոքախտին նման պատուհաս մըն է, անոր սոսկալի աւերներուն զիսաւոր պատճառն այն է որ՝ ամբոխը պէտք եղած ծանօթութիւններուն անտեղեակ է եւ ընդհանրապէս կարգ մը բժիշկներ ալ շատ թեթեւօրէն կը վարուին այդ ախտին հանդէպ:

Շատեր կը կարծեն եւ համոզում գոյացուցած են թէ զերմամիզութիւնը տեղական, աննշան հիւանդութիւն մըն է: Ընդհակաւակը, շատ քիչեր գիտեն թէ զերմամիզութիւնը լուրջ, երբեմն խստ ծանր ախտ մըն է եւ անոր մօտաւոր ու հեռաւոր կնճռոտութիւնները շատ վտանգաւոր են, եւ այսօր կարելի է, առանց չափազանցելու, զայն նկատել թոքախտին կամ ֆրանկախտին նման ամբոխային. ընկերական պատուհաս մը:

Այո՛, շատ անգամ տաքշեռը պարզ հիւանդութիւն մըն է՝ եթէ շուտ եւ լաւ խնամուի, բայց երբեմն ալ շատ ծանր ախտ մըն է եւ կրնայ անհատը մեռցնել:

Սյու, թեթեւ պարագաներ կան եւ ստէպ ոչինչ դարմանով մը, առանց նետեւանքի կարելի է բժշկուիլ. բայց կան նաև պարագաներ՝ ուր ենթական ամիսներով, տարիներով իր հիւանդութիւնը կը քաշքածէ, որովհետեւ օրինաւոր ու գիտական դարման մը չէ ունեցած, եւ, այդ ժամանակամիջոցին կուգան աւելնալ այն տեսակ կնճռոտութիւններ՝ որոնք գրեթէ անբուժելի կը մնան եւ կամ նոյնիսկ անհատին կիանքին կը սպառնան, եւ միւս կողմէն հիւանդութիւնն ալ ամբողջ շուրջիններուն մէջ տարածելու առիթ մը կը ստեղծուի:

Ուրիշներ ալ կէս խնամք մը ընդունելով՝ կը կարծեն թէ բոլորովին բժշկուած են. բայց հիւանդութիւնը կը քնանայ եւ առաջն պատճառով մը (յոզնութիւն, սեռային յարաբերութիւն եւային) դարձեալ զերմամիզութիւնը երեւան կուգայ, եւ ասիկա կը կրկնուի շատ անգամներ. ենթական յուսահատութեան մատնելու աստիճան:

Պիտի ջանանք ներկայ աշխատութեան մէջ զերմամիզութեան վրայ տալ համառօտ, պարզ եւ յատակ ծանօթութիւններ. մասնաւորաբար ծանրանալով կանխազգուշական միջոցներու վրայ:

Եթէ դոյզն չափով յաջողէինք օգտակար ըլլալ ընթերցողին՝ մենք արդէն մեր նպատակին հասած կ'ըլլանք:

Բժ. Ա. Մ. Ա. Վ. Ա. Վ. Ա.

Ռոտորով, 19 Մայիս 1920

## ԶԵՐՄԱՄԻԶՈՒԹԻՒՆ

ԱՄՕԹԱԼԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ...

Տեսակ մը բարոյական կեղծ ըմբռնումով, ծննդական գործարանները ամօթալի նկատուած են և անոնց կամ գործարանները ամօթալի նկատուած են. առողջացած կամ արտադրած հիւանդութիւններն ալ՝ ամօթալի հիւանդութիւններ: Ընկերութեան մէջ անպատճառացին հիւանդութեանց վրայ խօսիլ, և եթէ չան է սեռային հիւանդութեանց վրայ խօսիլ, և եթէ մարդ փորձուի կամ առիթն ունենայ անոնց մասին գաղափար մը յայտնելու, ներկաները կը կարմրին, երիտասարդներ խոյն կուտան:

Սպատօրէն կը ճատենք սպանութեան, գողութեան, մասնութեան... վրայ և երբ կարգը կուգայ մարդուն ծնունդ տուող գործարաններուն, խօսակցութիւնը անշարժար, այպահնելի կը նկատուի:

Ի՞նչ կեղծաւորութիւն...

Յառաջդիմութիւն թէ յետագիմութիւն...

Պատմութիւնը կը ցուցնէ թէ՝ նախամարդոց համար սեռային գործարանները ամենէն աղնիւները սեռուած էին, իսկ այժմ կը զարմանանք թէ ինչո՞ւ ամօթալի նկատուած են:

Ի՞նչո՞ւ ամօթալի կոչել գործարաններ՝ առանց որոնց ես ու դուն գոյութիւն պիտի չունենայինք: Սեռային գործարանները ո՛չ միայն ամենէն աղնիւներն են, այլ նաև ամենակարեւորները, որովհետեւ անոնցմէ կախում ունի ամբողջ ընտանիքի մը, ցեղի մը, մէկ բասով՝ համայն մարդկութեան գոյութիւնն ու ապագան:

Ամօթալի՛ հիւանդութիւն . . . :

Բայց հիւանդութեանց ամօթալին որո՞նք և ի՞նչ-պէս կ'ըլլան : Ինչո՞ւ վեներական ախտերը ամօթալի կը կոչուին : Անոնք ալ ուրիշ հիւանդութեանց նման հիւանդութիւններ են , որոնց մարդ ենթակայ է շատ անգամ , եթէ ոչ միշտ , անդիտակցաբար և առանց ուղելու :

Ընդհանրապէս անանկ կը կարծուի թէ այս հիւանդութեանց ենթակաները պէտք է որ անպատճառ թեթև բարոյականով կանանց հետ ապօրինի յարաբերութիւն ունեցած ըլլան :

Հոչակաւոր բրօֆէսօր Ֆուռնիէ քննած է ջերմամիզութիւն ունեցող 387 կիներ և անոնց մէջ գտած է .

12 հանրային կիներ ,

44 թեթեւ բարոյականով օրիորդներ ,

138 պահծու տարփուհիներ ,

126 գործաւորուհիներ

41 սպասուհիներ ,

26 ամուսնացած կիներ :

Այս ցուցակին ուրեմն կ'երեւայ թէ ընկերութեան մէջ ամէն դաստակարդի անձեր այս հիւանդութեան ենթակայ են :

Հին բարի ժամանակները երիտասարդ մը 20-22 տարեկան հասակին մէջ կ'ամուսնանար , ինչ որ անպայման շատ աղէկ բան մըն էր : Բայց այժմ , քաղաքակրթութեան յառաջացումով , պահանջները բաղմապատկուած են և կեանքը շահելու միջոցները գժուարացած . տղամարդ մը պարտի 30-35 տարեկան ըլլայ , եթէ ոչ աւելի , գիրք մը շինելու , ամուսնանալու համար : Արդ , ո՛չ բնախոսական տեսակէտով , ո՛չ ալ մարդկօրէն կարելի է որ մարդ մինչև այդ տարիքը հրեշտակի մը

նման մաքուր ապրի և սեռային ո՛եւէ յարաբերութիւն չունենայ , որով ենթակայ պիտի ըլլայ նաև վեներական ախտերու : Հոչակաւոր Ռիքոս կ'ըսէր . «Մարդ ունեցած է , ունի կամ պիտի ունենայ վեներական հիւանդութիւն մը» :

Արդ , փոխանակ այդ հիւանդութիւնները ամօթալի , այլպահելի նկատելու , աւելի խոնեմ և օգտակար պիտի ըլլար՝ զանոնք ծանօթացնելու հասարակութեան ամէն խաւերու և ամէն տարիքի անհատներու , մանաւանդ նորահաս երիտասարդներու , առանց սեռի խսրութեան :

Մենք իբր բժիշկ , պիտի ջանանք փնտուելու այն միջոցները՝ որոնց կիրառումով կարելի պիտի ըլլայ այդ հիւանդութեանց տարածումը արգիլել և ցուցնել նաև անոնց աւելները և զանոնք լաւ ինսամելու միջոցները :

Հիւանդները կը յուսանք , փոխանակ իրենց հիւանդութիւնը ծածկելու , համարձակ բժիշկին պիտի ներկայանան , որովհետեւ շուտափոյթ դարման մը՝ դիւրաւ և արագ բժիշկութեան եթէ ո՛չ առաջին՝ գէթ գլխաւոր պայմաններէն մէկն է :

• • •

## ՊԱՏՄԱԿԱՆ

---

Զերմամիզութիւնը ա'յնքան հին է՝ որքան աշխարհի գոյութիւնը։ Արդարև Մովսէսի կողմէ Խորայէլացինք բուն արուած կանխազգուշական խրատներուն մէջ կը կարգանք։

«Ճերմակ հոսումով վարակուած մարդ մը անմաքուր պիտի նկատուի . . . Այն անկողինը ուր պիտի քնանայ, այն վայրէրը ուր պիտի հանգչի՝ անմաքուր պիտի ըլլան։ Խորայէլի գաւակներուն պիտի սովորեցնէք զգուշանալ անմաքրութենէ, չի մեռնելու համար պըղծութեան մէջ» (Ղետացոց Գիր):

Իսկ արաբացի բժիշկները աւելի լաւ ուսումնասիրած ու նկարազրած են այս հիւանդութիւնը և անորինամքին մասին մանրամանութիւններ տուած։

Զերմամիզութիւնը, հին ժամանակներէն ոկսած, առնէն շատ տարածուած և ամենահասարակ հիւանդութիւններէն մէկն է։ Եւ այդ տարածման ու ընդհանրացւման պատճառներ նկատուած էին ո՛չ միայն փոխանցումը, այլ նաև ոեռային յարաբերութիւններու չափազանցութիւնը, գիծութիւնը, առնանդամի երկարատև կանգնումը, ամէն տեսակ զրգութիւններ, գաշտանի տակն կնոջ մը հետ մերձաւորումը, ալքոլի և ոգելից ըմպելիւներու չափազանց գործածութիւնը, ինչպէս նաև կարգ մը դեղերու և նիւթերու կիրառումը ևայն։

Եթէ վերև յիշուած պատճառները իրաւաբն ջերմամիզութիւն յառաջ բերէին, շատ զիւրաւ կրնանք ըմբռնել թէ ամէն անհատ կեանքին մէջ զէթ մէկ ան-

գամ ենթակայ ըլլալով այս պատճառներէն մէկուն, աշխարհի վրայ ջերմամիզութիւն չունեցող մէկը պիտի չգտնուէր, ինչ որ բարերախտաբար իրականութիւն չէ։ Բրօֆ. ՈՒքոս ալ ջերմամիզութենէ վարակուելու համար հետեւեալ դեղագիր-միջոցը կ'առաջարկէր։

«Կ'ուզէք ջերմամիզութիւն ունենալ. ահա՛ միջոցը։ Բնարեցէք աւելի աւշային, խարսեաշ կամ թուխ, կարելի եղածին չափ առատ արդանդահոսում ունեցող կին մը։ Ճաշեցէք միասին, սկսելով սստքով և չարունակելով ծներեկով։ Խմեցէք առատօրէն ճերմակ գինի, սուրճ, շամբանիա, զանազան ոգելից ըմպելիներ։ Ճաշէն վերջ պարեցէք ճեր ընկերունիին հետ, լաւ մը գրգսեցէք և գրգուեցէք։ Յետոյ զիշերուան մէջ երկու կամ երեք — եթէ կրնաք աւելի — անգամներ մերձաւորում ունեցէք։ Երբ առաւօսուն արթընաք, տաք լսգանք մը առէք։ Երբ այդ խրատներս խղճմորէն և կէտ առ կէտ կատարէք, վստահ եղէք թէ ջերմամիզութիւն պիտի ունենաք։ Իսկ եթէ հակառակ պատահի, վստահ եղէք թէ Աստուած ձեզ պաշտպանած է։»

ՈՒքոսի այս խօսքերը այսօր պատճական քմայքի մը արձէքն ունին միայն։

Երկար ատեն ֆրանկախտ, կակուղ չարկեղ (Chancre tou) և ջերմամիզութիւն՝ մէկ հիւանդութիւն նկատուած էին, մինչև որ 1870 թուականին նէյսէր գտաւ ջերմամիզութեան յատուկ մանրէ մը, որով ան զանազանուեցաւ միւս երկու հիւանդութիւններէն։

Զերմամիզութեան միքրոսկը պատիկ մանրէ մըն է՝ սուրճի հատիկներու նմանուող երկու կիսամատերով։ 1870 թուականին ի վեր ջերմամիզութիւնը կատարեալ է 1870 թուականին ի վեր ջերմամիզութիւնը կատարեալ է՝

Հապէս որոշ և դասակարգուած հիւանդութիւն մըն է .  
ո՞ւր որ այդ մանրէն չկայ , հոն ջերմամիզութիւն չկայ :  
Ամէն անհատ երբ իր սերնդական զործարաններուն  
մէջ ընդունի Նէյսէրի միքրոպը , կրնայ ջերմամիզու-  
թիւն ունենալ . բայց խարտեաշները , աւշային խառ-  
նուածք ունեցողները , խուլախտաւորները , տկարա-  
կազմները աւելի դիւրու ենթակայ են :

Կան նաև անհատներ , առողջ կազմով , որոնք շատ  
դիւրաւ կ'իւրացնեն այս հիւանդութիւնը : Շատ օրի-  
նակներ ունինք , ուր երկու բարեկամներ միեւնոյն օրը  
յաջորդաբար յարաբերութիւն ունեցած են միեւնոյն  
կնոջ հետ , — մէկը ջերմամիզութիւն ունեցած է , իսկ  
միւրը կատարելապէս զերծ մնացած է անկէ :

Նմանապէս կանուխէն ջերմամիզութիւն ունեցած  
անհատ մը , երբ ասիթը ներկայանայ՝ կրկին անդամ  
աւելի դիւրաւ կը վարակուի , քան մէկը՝ որ բնաւ չէ  
ունեցած :

Ամէն պարագայի մէջ , կնոջ մը հետ ունեցէք սե-  
ռային յարաբերութիւն՝ ի՞նչ ձեւի տակ որ կ'ուզէք ,  
եթէ կնոջ մօտ չկայ ջերմամիզութեան մանրէն , երբեք  
տաքչու չէք կրնար ունենալ : Ինչպէս որ թոքախտ ,  
ֆրանկախտ ունենալու համար անոնց մասնաւոր ման-  
րէն գոյութիւն ունենալու է , նոյնպէս ալ ջերմամի-  
զութիւն ունենալու համար , Նէյսէրի մանրէն գոյու-  
թիւնը անհրաժեշտ է :

Սնչուշտ չափազանցութիւններու դիմելով կրնաք  
ունենալ առնանդամի քիչ ու շատ բորբոքում մը՝ մրգ-  
կապուպ (échauffement) անունով . բայց ասիկա հա-  
սարակ բորբոքում մըն է , ջերմամիզութիւն չէ և շու-  
տով կը բժշկուի՝ թեթև դարմանումով և քիչ մը հան-  
գիստով :

## ԱՅՐ ՄԱՐԴՈՒ ՃԵՐՄԱՄԻԶՈՒԹԻՒՆԸ

### ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

#### Թիսոման օրշան

Երբ տարսովիսիկ մերձաւորութենէ մը վերջ , ջեր-  
մամիզութեան մանրէն առնանդամին վրայ հաստատուի ,  
հիւանդութիւնը անմիջապէս երեւան չելլեր :

Ցարաբերութենէն 3—5 օր վերջը միայն հիւան-  
դութիւնը կը սկսի (բացառաբար 24 ժամէն և երբեմն  
ալ 10—15 օրէն) , և այս վարակման ժամէն մինչև  
ջերմամիզութեան հրապարակ ելլելու ժամանակամիջոցը  
կը կոչուի թիսուն շրջան (période d'incubation) :

#### Սկզբնաւորութեան կամ գրաւման օրշան

Յետոյ ենթական միզած ժամանակակ կը սկսի զգալ  
թեթև այրում մը , միզանցային խողովակին մէջ տեսակ  
մը քերութառուք , վարոցին ծայրն ալ անուշ խըտլտանք  
մը : Առնանդամին ծայրի ծակը կը սկսի թեթեւօրէն  
կարմրիլ , ուրկէ տեսակ մը հեղուկ կը հոսի : Հետզիետէ  
կարմրիլ , ուրկէ տեսակ մը հեղուկ կը հոսում կը շատնայ ,  
այս երեւոյթները կը շեշտուին և հոսումը կը շատնայ ,  
ասիտակ , մածուցիկ ; լորձնաւոր և յետոյ թանձր ու դե-  
սպիտակ , մածուցիկ ; լորձնաւոր և յետոյ թանձր ու դե-

#### Պուր օրշան

Յետոյ բորբոքումը՝ որ ծեփուկէն սկսած է՝ կը

տարածուի վերէն դէպի վար . հիւանդութիւնը կը ստանայ սուր հանգամանք մը , ինչ որ կը կազմէ ջերմամիզութեան սուր շշանիլ (période aiguë ou d'état) և որ կը տեւէ 20—30 օր : Միզանցքը (téat) կը կարմրի , կ'ուսի և կը բորբոքի . վաղութը կը շատնայ գեղին կամ կանաչորսկ , թարախի նման . երբեմն նոյնիսկ կարմրագոյն և առատօրէն կը թրջէ և կեղտոտ , բնուրոշիչ հետքիր կը թողու ձերմակի դէններուն վրայ :

Ենթական միզած ատեն սաստիկ ցաւեր կը զգայ ,  
իբր թէ կրակ միզէր , այս պատճառաւ է որ հիւանդութիւնը ջերմամիզութիւն կամ տաքչու (chaudepisse) կը կոչովի :

Միզանցային խողովակը կը հաստանայ և կարծր լարի մը նման առնանդամին տակի կողմը կը ցցուի. Եթե այս վիճակը շեշտուի, կը կազմէ շարանինան ջերմափորինել (*chaudepisse cordée*):

Ենթական մասնաւորաբար գիշերները տաժանելի կանգնումներ կ'աւճնենայ և այնքան ցաւ կը զգայ՝ որ իրեն անկարելի կ'ըլլայ հանգիստ մը քննանալ։ Շատ անգամներ սերմիահոսութիւն ալ տեղի կ'ունենայ, պատճառելով երբեմն արխիւնահոսութիւն և սուր ու այրող ցաւեր։

## Ukrainian people's art

Յետոյ յաւերը կը թեթեւնան ու կը պակսին, վազուքը կը նուազի և կ'ըլլայ աւելի հեղուկ և ձերմակ, և 10-15 օր վերջ, եթէ կանոնաւրապէս լաւ խնամուի, բոլորպին կը դադրի. այս ժամանակամիջոցն ալ կը կոչուի վերջաւորութեան շրջան (période de déclin):

Ուրեմն, ջերմամիզութեան ամբողջ տեւողութիւնը

Ասառուած գլուխ և ուր կը լի է ՀՀ  
Փորձառութիւնը կը ցուցնէ թէ՝ ո՞րքան ջերմամի-  
զութիւնը սուր և սաստիկ ըլլայ, ա'յնքան շուտ կը  
քժակուի: Այսպէս է օրինակի համար, երբ մէկը առա-  
քին անգամ ջերմամիզութիւն ունեցած է, բայց երբ  
այդ միեւնոյն անձը մէկի աւելի անգամներ ջերմամի-  
զութենէ վարակուի, առաջին անգամուան պէս ցաւերը  
սաստիկ և սուր չմն ըլլար, սակայն հիւանդութիւնը  
աւելի երկար կը տեռէ և դարմահումն ալ աւելի գրժ-  
ուար կ'ըլլայ:

ԿՐԵԱԿԱՆ ՀԱՅ ԱԽՏԱԴԱՐԱ ՉԵՐՄԱՄԻԳՈՒՐԻՆ

Երբեմն չերմամիզութիւնը բժշկուած կը կարծուի ,  
այսինքն ցաւ և վազուք դադրած է , բայց 5 — 10 օր  
վերջ վազուքը դարձեալ կը սկսի . կրկին խնամք և  
ահա՛ հոսումը կը դադրի՝ ժամանակ մը վերջ հիւան-  
դութիւնը կրկին երեւան ելլելու համար , և այսպէս  
յաջորդաբար ամիսներով : Այս պարագային մէջ ջերմա-  
միզութիւնը կը կոչուի իրվուող կամ յեսադաձ ջերմա-  
միզութիւն (chaudepisse à répétition) :

Հինգած ջերմամիզուքիւն կամ օփախս կամ խլանուքիւն

Ուրիշ ատեն ալ, երբ մասնաւորապէս չերմամիզութիւնը անկանոն խնամուած է, ենթական ցերեկը գրեթէ վազուք չունի, բայց առտուն երբ անկողինէն ելլէ, վարոցին ծայրը կաթնազոյն կամ զեղնորակ կաթիլ մը կը տեսնուի, որը միզանցին շրթները իրար կը փակցնէ: Այս ձեւը կը կոչուի հիմացած, յրունիկ ջերմամիզութիւն (*rhaudepisse chronique*) կամ խճանութիւն (*blennorrhée*) և կամ շիրախս (*goutte militaire*):

## ԶԵՐՄԱՄԻՉՈՒԹԵԱՆ ՄՈՏԱԿՈՐ ԵՒ ՀԵՌԱԿՈՐ ԿՆՃՌՈՑՈՒԹԻՒՆԵՐԸ

Զերմամիկութիւնը եթէ կանոնաւորապէս խնամուի և բժշկուի, շատ անգամ ո՞ւ և է հետք չի թողուր։ Երբեմն սակայն վաղուքք ամբողջովին դազրելէն վերջ, կը պատահի որ ենթական ունենայ զանազան գործարանական փոփոխութիւններ կամ նոյնիսկ անկարգութիւններ։ Օրինակի համար, հիւանդը միզածատեն միզանցքին մէջ կ'ունենայ այրում կամ բռւռն զգայականութիւն մը։ այս վիճակը ընդհանրապէս շատ շուտ կ'անցնի, բայց երբեմն ամիսներ, տարի մը կամ աւելի կը տեւէ։ Այս երեւոյթները ծանր հետեւանքներ չունին, սակայն կը նեղեն ենթական և անոր մը տատանջութիւններ տալու անպատեհութիւնն ունին։

Երբեմն ալ, հակառակ անոր որ չերմամիկութիւնը լաւ մը բժշկուած է, ենթական սուր ցաւեր կը զգայ առնանդամի կանգնած և սերմնահոսութեան ժամանակ, Այս անպատեհութիւնը առանց ո և է զարմանումի առ առաւելն 2-3 ամիսէն կը բժշկուի։

Պէտք է յիշել նաև յաճախակի և ստիպողաբար միզելու պարագան ալ, ինչ որ արդիւնք է միզանցքին գրգութիւն։ Հոս մէզը դանդաղօրէն կը վազէ և շատ ասեն միզամանը անկատար կը պարպուի։ կը պատահի որ միզանցքին թաղանթը իր առաձգականութիւնը կորսնցուցած ըլլալով, կաթիլ մը մէզ կը մնայ միզանցքին մէջ, և յետոյ, կ'աղտոտէ ձերմակելէնները։

Դիտուած է նաև որ չերմամիկութեան բռւժումէն վերջ սերմնահոսութեան ատեն հեշտալի զգացողու-

թիւնը ջնջուած ըլլայ մասամը կամ ամբողջովին։ բայց նոս ալ առանց դարմանումի մէկ քանի ամիս վերջ բռնական զգացողութիւնը քիչ ու շատ կը վերահաստատուի։ Վերև յիշուած ախտաբանական երեւոյթները սակայն զէշ հետեւանքներ չունին։ Ասոնց քով կան մօտաւոր կամ հեռաւոր կնճուտութիւններ՝ որոնք շատ անգամ անզարմանելի են և երբեմն ալ մարդուակեանքին կը սպառնան։

Մենք իւրաքանչիւրին վրայ պիտի խօսինք համառոտակի, իրենց ունեցած համեմատական կարեւորութեան համաձայն։

### Գեղձաբուրբում (Adénite)

Զերմամիկութեան սուր շրջանին մէջ, յոդնութենէ մը վերջ, ցայլական զեղձերը կրնան բորբոքիլ, առաջ բերելով ուսեցք մը և քիչ ու շատ ցաւ։ Մէկ քանի օր հանգիստ բաւական է՝ վերջ տալու համար այս գեղձատապին։

### Շեփուկի բուրբում (Balanite)

Զերմամիկութեան սուր վիճակին մէջ ծեփուկը կրնայ բորբոքիլ և յառաջ բերել կապան կամ զոցանդամութիւն (phimosis) և կամ բուրբուծ ծեփուկի շրջում (paraphimosis)։

Շատ ատեն բժշկական պղտիկ խնամքով և մանաւանդ մաքրութեամբ, ախտաբանական այս երեւոյթները կը բժշկուին առանց զէշ հետեւանքի։

Ասիկա չերմամիկութեան արդիւնք չէ, սակայն չերմամէզին մօտ կը պահուի և կ'ածի։

Վեներական մասքուսութիւնները գնդասեղի մը պլսուն մեծութեամբ վարդապոյն կամ կասկարմիր փոքրիկ ջրխոցիկներ են՝ որոնց թիւն ու ծաւալը արագօրէն կ'աճին։ Նախապէս մենաւոր, ուրոյն են, բայց մեծալով իրարու կը մօտենան ա՛յնքան որ՝ իրար կը միանան և կը նմանին խոշոր ելակի մը կամ ընդակաղամքի (Դարձապիր, *chou-fleur*):

Առանց վտանգի, քիչ մը տարափոխիկ պարզ հիւ-  
ւանդութիւն մըն է, որուն պատճառը գեռ մեղի անծա-  
նօթ է: Երբեմն այս մասքուսութիւնները ա'յնքան կը  
խոշորնան՝ որ քալելու դժուարութիւն կուտան կամ  
արգելք կ'որիան:

## Փամփւօտապ (Cystite)

Գելմաժիզութեան ձախաւեր դարմանումի իբր հետեւանք՝ շատ ատեն միջամանը կը բարբարի և յառաջ կը բերէ փամիջատավը, որուն նշաններն են փորին վարի մասերուն և սրբանին մէջ սարսափելի ցաւեր, նամանաւանդ միզելու ատեն, շատ անգամ ալ, մէզի վերջին կաթիլները արինով գունաւորուած և երբեմ միզարդելութիւն։ Պէտք չէ այս հիւանդութիւնը հինգնել, որովհետեւ յետոյ դարմանումը աւելի զժուար կ'ըլլայ։ Պետք է անմիջապէս և լրջօրէն ինամել տալ բժիշկի մը։

Կատարենիկի սուր բորբոքմ (Prostatitis aigüe)

Կառտանիկը կամ շագանակագեղձը մառւա մեծ զեղձ  
մըն է, ընկոյզի խոշորութեամբ, որուն ստորին մասը  
կընդդրիէ փամփուշտի բերանը, իսկ կատարը կը շըր-  
ջապատէ միզանցքին յետնամասը:

Սյս գեղձը կ'արտադրէ հեղուկ մը՝ որ սերմի բաղադրութեան մաս կը կազմէ, որով շատ իսխա կարեւոր պաշտօն մը ունի: Եթէ ջերմամիզութեան ժամքէն շապանակագեղձին մէջ հասնի, գեղձը կը բռրքոքի, աշապանակագեղձին մէջ հասնի, գեղձը կը բռրքոքի, առաջ բերելով տաքութիւն, սրբանի կողմը սաստիկ ցաւեր, երբ ենթական միզէ, կամ անոր փորը ելլէ: Միգումը կ'ըլլայ յահախտակի, ցաւով, դժուար, քանակութիւնը փոքր՝ բայց սննդապելի:

Եթէ այս բորբոքման առաջքը չառնուի լուրջ և գիտական դարձանով մը, յառաջ կուգայ քրնիկ շազմանիսկագեղձատապը (prostatite chronique), որը անցագույն վիճակի կը գերածէ շատ անգամ ջերմամիջութիւնը; Տարիքը առնելով, հնթական կ'ունենայ գեղձի խոշորութիւն (hypertrophie de la prostate), որը առատիկ կը ներէ անհատը միզելու ժամանակ:

**Ամոքամապ** (orchite) կամ **Մակամուրամապ** (épididymite)

Ալորհատապ ըսելու տեղ՝ աւելի ճիշտ և գիտական  
պիտի ըլլար զայն կոչել մականորհատապ, որովհետև  
այս հիւանդութիւնը առաջ կուգայ ջերմամիզութեան  
մանրէն ազդեցութեամբ ոչ թէ ամորձիքին՝ այլ ա-  
մորձիքին վրայ դանուող մակամորձիքին (épididymite)  
բորբոքումէն:

Այս հիւանդութեան ախտանիշներն են. ամոռձիք-  
ները քիչ ու շատ կ'ուզին, հիւանդը խիստ սուր ցա-  
ւեր կը գցայ, քալելու գծուարութիւն կ'ունենայ,  
վաղուքը կը պակսի կամ բոլորովին կը գտզրի, շատ  
անդամ տաքութիւն կուգայ և ընդհանուր վիճակը կը  
վատթարանայ:

Զերմանիկութեան տասնէն մինչև տասնըշրջագա-  
րորդ օրը ամորձատապ յառաջ կուգայ անոնց քով՝ ու-

ՀԱՅ. Հ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
Հ. Հ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈBLԻЧՆԱ ՎԻԼԱՆՈՏԵՐԱ  
7/II. 1922  
ԱՐՄԵՆԻԱ, ԽԱՆԿԱԿԱՆ  
ԱՅՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԴ ԱՀԱԿԱՆ

րոնք ընդհանրապէս մարմնական յոգնութիւններու, ծայրայեղ ճիգերու, գիճութեան, ցուրտի, պարի և այլն ազդեցութեան ենթակայ եղած են, բայց երբեմն ալ առանց որ և է որոշ պատճառի:

Ընդհանրապէս միակողման է. երբեմն երկու ամորձիքներն ալ կը վարակուին, բայց միշտ յաջորդաբար:

Հիւանդութիւնը կը առեւէ 10-25 օր:

Եթէ ամորձատապը միակողման է, բժշկուելէն վերջ ո և է հատեւանք չի ժողովր: Այն պարագային՝ երկու ամորձիքներն ալ վարակուած են, բժշկութենէն վերջ ամլութիւն առաջ կրնայ զալ:

Ամորձատապի գարմանումին մէջ հանգիստը շատ մեծ դեր կը խաղայ:

#### Միզանցի անձկուրին (rétrécissement de l'urèthre)

Զերմամիզութիւնը եթէ անխնամ մնայ, միզանցքը տեւական բորբոքման ենթակայ ըլլալով, ներքին թաղանթը կը թանձրանայ և կը սպիանայ, և այսպէս անզգալարար, երկար տարիներու ընթացքին (սացառաբար կարճ ժամանակուան մէջ) ճամբան կը նեղնայ և միզելու գործողութիւնը կը դժուարանայ: Մէզի ժայթքումը, ձեւը, ծաւալը փոփոխութիւններ կը կրեն. երբեմն մէզի ժայթքը կը ճիւղաւորուի, որուն մէկ ճիւղը գեռ քիչ ու շատ կը ցայտէ, իսկ միւս ճիւղը կօշիկն վրայ կը վազէ: Երբեմն ալ կարծես ցնցուղէ մը կը վազէ կաթիլ կաթիլ: Ուրիշ ժամանակ ալ դերձանի պէս բարակ դուրս կ'ելլէ: Կրնայ պատահիլ նաև որ ենթական կաթիլ կաթիլ իր կօշիկներուն վրայ միզէ:

Միզելը աւարտելէն վերջ ոմանք կը զգան թէ տա-

կաւին միզելու փափաք ունին. պատճառը այն է որ՝ կամ միզամանը ամբողջովին չէ պարպուած և կամ միզանցքին նեղցած մասին ետեւը մէկ քանի կաթիլ մէզ կը ժողվուի և յետոյ կամաց կամաց կը ծնծնայ ծանրութեան ազդեցութեան տակ և կը թրջէ ճերմակերէնները:

Միզանցքի անձկութիւնը անզգալարար և առանց ցաւի կը կազմուի ամիսներու, տարիներու ընթացքին և եթէ անխնամ մնայ, անձկութիւնը ա'յնքան կարեւոր կ'ըլլայ որ մէզը դուրս ելլելու համար ենթական պէտք քրանչելու աստիճան մէծ ճիգեր թափել և նըսկ'ըլլայ քրանչելու աստիճան մէծ ճիգեր թափել և նըստուկ միզել: Հաղար տանջանքներէ վերջ, հաղիւ թէ քանի մը կաթիլ միզած է, նորէն միզելու փափաքը կ'արթնայ և միեւնոյն տառապանքներն ու գժուարութիւնները կը կրկնուին՝ գարձեալ մէկ քանի կաթիլ միզելու համար, և այսպէս, 24 ժամուան մէջ, յիսունէն մինչև հարիւր անզամներ:

Եթէ հիւանդութիւնը աւելի առաջ երթայ, միզային բորբոքում և միզարգելութիւն կրնայ առաջացնել:

Սկզբէն եթէ խնամուի, զարմանումը դիւրին և կարելի է: Եթէ անխնամ մնայ, վերջ ի վերջոյ պէտք պիտի ըլլայ վիրաբուժական գործողութեան մը. և գործողութիւնը շատ անզամ ալ չի յաջողիր:

Օրաթերթերու չորրորդ էջին մէջ առէն օր կը կարդաք. — «Զերմամիզութիւնը մէկ անզամէն բժշկեցաւ. — միզանցքի անձկութիւնը électrolyseով մէկ օրէն լի... միզանցքի անձկութիւնը մէկ օրէն...»:

և վերջնականապէս բժշկելի, առանց ցաւի և այլն...»:

Յանախորդ չունեցող բժիշկի շառլաթանութիւնները...»:

Միզանցքի անձկութիւնը լուրջ դարմանումի պէտք

ունի՝ երկար ժամանակ sonde béniquéeներով կամ électrolyseով, և կամ, եթէ անձկութիւնը շատ առաջ գայած է, անպայման վիրաբուժական գործողութիւն մը անհրաժեշտ է. և ասոնցմէ վերջ ալ, որպէսզի միզամցքը իր ընդլայնումը վերապահէ, ենթական տարին մէկ քանի անդամներ բժշկական դարմանումի և հսկողութեան տակ գանուելու է:

#### Զերմամիզային յօդացաւ (rhumatisme blephorragique)

Զերմամիզութեան թէ՛ սուր և թէ հինցած վիճակին մէջ յօդացաւ յառաջ կրնայ գալ՝ մէկ կամ աւելի յօդուածներու վրայ (ծունկ, արմուկ, ուս և այլն): Երբ բեմի կը բորբոքի, կը բացուի և կը թարախուի:

Կը պատահի որ չերմամիզութեան իբր հետեւանք մկանային ցաւեր առաջ գան:

Յօդացաւը՝ ըլլա՛յ տեղական, կղզիացած, ըլլա՛յ ընդհանրացած, միշտ լուրջ, ծանր, անբժշկելի և յուսահատեցուցիչ է: Եթէ նոյն իսկ ցաւերը նուազին, յօդուածին ձկունութիւնը կը կորսուի քիչ ու շատ:

Դարմանը երկար կը տեւէ: Վաքսիկոնի ներարկումը և հանգիստը միզի բաւական լաւ յաջողութիւններ տուած են:

Վերջապէս չերմամիզութեան մանրէն արեան շըրջանին մէջ կ'անցնի և շատ ատեն մահացու վախճան մը կ'ունենայ: Բարեբախտաբար այս ընդհանրացումը հազուադէպ կը պատահի:

#### Զերմամիզային աչացաւ (ophthalmie blephorragique)

Եթէ մայրը չերմամիզութիւն ունի, տղուն ծնած ժամանակ հսկումով միքրոսկը տղուն աչքին վրայ կրնայ

հաստատուիլ և յառաջ բերել աչքի բորբոքում մը, խիստ վտանգաւոր:

Ընդհանրապէս բոլոր նորածիններու կուրութիւնը չերմամիզային աչացաւի հետեւանք է:

Զափահաններուն քով, երբ մէկը մատը կամ ո՛ և է ուրիշ առարկայ մը ջերմամիզութեան թարախէն աղտոտուելէ վերջ իր աչքին գացնէ՝ ջերմամիզային աչացաւ առաջ կուրդայ:

Շատ անգամ վիտիանցումը հպումէն 3-4 օր վերջ կը սկսի. նախ աչքի բորբոքում մը, առատ արձունք և խիստ սուր ցաւեր, և յետոյ՝ թարախսոտ առատ վագուք մը: Վերին կողը մասնաւորաբար կ'ուռի և աչքը կը գոյցուի և թարախը կը ժողվուի կոպերուն հտև:

Երկու աչքերն ալ կրնան վարակուիլ:

Եթէ ժամանակ չանցուցած շուտափոյթ և լուրջ դարման մը չըլլայ՝ աչքը կրնայ ծակիլ, պարպուիլ, այնպէս որ տեսողութիւնը կը չնծուի ամբողջովին և վերջնականապէս:

#### Մրանային չերմամիզուրիւն

Մրանային մերձաւորութեամբ, այսինքն հակարնական, տգեղ մոլութեամբ առաջ եկած չերմամիզութիւն մըն է:

Մրբանի թաղանթը կը կարմրի, կ'ուռի, փորը եւ լած ժամանակ խիստ ցաւեր կը պատճառէ և առատ դեղին-կանաչ թարախ մը կը հոսի՝ աղտոտելով ամէն հագուստ:

Լաւ դարձանումով մը 20-30 օրէն կրնայ բժշկուիլ:

Զերմամիզուրեան իբր հետեւանք՝ ջղային անկարգութիւն-

ներ Վերև յիշուած կարդ մը զործարանալին հիւան-

գութիւններուն վրայ պէտք է աւելցնել նաև ջղային

երեւոյթներ՝ որոնք կուզան ամբողջացնել ջերմամիզու-

թեան ախուր կնճռոսութիւններու շարքը։

Արդարեւ, երբեմն նոյնիսկ ջերմամիզութեան բը-

ժրչուելին վերջ, լուրջ վտանգ մը կայ։ Ոմանք —

անշուշտ եթէ ենթակայութիւն ունին —, ջղային ար-

կարութիւններ կ'ունենան, խիստ երկար և գժուարաւ

դարմանելի։ Կատարելապէս բժշկուած կարդ մը ան-

հատներ այն համզումը ունին թէ՝ երբեք ջերմամիզու-

թենէ պիտի չառողջանան, և, գիշեր ցերեկ այդ գա-

ղափարը զիրենք կը տանջէ, կեանքը անտանելի կը

դառնայ և իրենց պարագաներուն ալ հանդստութիւն

չեն տար։ Օրն ի բուն իրենց մարմինին վրայ ախտա-

նիշներ կը փնտուն։ օրաթերթ մը առնելնուն պէս ա-

նոր չորրորդ էջը կը կարդան, րէքլամի գրքոյիներով

մտքերնին կը յոդնեցնեն, հազարումէկ անկանոն դե-

ղեր կը զործածեն և մշտակայօրէն բժիշկ կը փոխեն։

Այս կարգի հիւանդները պէտք է դարմանել իբր

ջղայիններ՝ և ո՛չ թէ ջերմամիզութիւն ունեցողներ։

Քրոնիկ զերմամիզութիւն, խնահոսութիւն կամ օփրախս

(bleuorrage chronique ou goutte militaire)

Զերմամիզութիւն մը՝ եթէ միջին հաշուով երեք

ամիսն չէ բժշուած՝ հինգած, քրոնիկ պէտք է նկա-

տել և կը կոչուի խնահոսութիւն՝ կամ շիրախս (goutte

militaire)։

Ինչո՞ւ ջերմամիզութիւն մը այսպէս դիւրաւ քրո-

նիկ վիճակի կը վերածուի. պատճառները բաղմաթիւ-

են և իւրաքանչիւր պարագային կրնայ տարբեր ըլլաւ։

Գոցանդամութիւնը (phimosis), միզանցքին անձ-

կութիւնը նախապատրաստող պատճառ մնն է։ Սակայն

ամենէն նպաստաւոր և յաճախակի պատճառներն են՝

առողջապահական միջոցներու բացակայութիւնը, դար-

մանի սխալները (օրինակի համար հիւանդութեան սուր

վիճակին մէջ պէշ ներարկումներ), գրգռիչ նիւթերով

ներարկումներ, բժշկուելէ առաջ կնոջ հետ սեռային

յարաբերութիւններ, վերջապէս դարմանի բացակայու-

թիւնը, անբաւականութիւնը կամ չափէն աւելի եր-

կարող ջերմամիզութիւնը։

Կան սակայն պարագաներ, ուր հիւանդը շատ գի-

տականօրէն և կաննաւորապէս խնամուած ըլլալով

մէկտեղ, դարձեալ հիւանդութիւնը քրոնիկ վիճակի վե-

րածուած է։ Սյս պարագային պէտք է պատճառը փեն-

տըւել նոյնիսկ արանդամին կազմախօսութեան մէջ։

Իրաւցնէ, միզանցքի ներքնակողմը ողորկ խողո-

վակ մը չէ. ընդհակառակը ներքնաթաղանթը ծածկը-

ւած է շատ մը և զանազան տեսակի մանր գեղձերով

և անել խոսոչիներով։ Զերմամիզութեան մանրէն ա-

սոնց մէջ պահութելով, անոնց ջնջումը եթէ ո՛չ ան-

կարելի՝ պէտք շատ դժուար կ'ըլլայ։

Եփրախսի նօաննեւը

Զերմամիզութեան սուր վիճակին մէջ գոյութիւն

ունեցող ցաւերը և բորբոքումը ջնջուած են, սակայն

վաղութեան թէւ շատ նուազած ցերեկ ատեն, բայց բո-

լորովին սպառած չէ։ Առաւօսուն, ենթական քունէն

արթնցածին պէս և միզելէ առաջ, ընդհանրապէս ծե-

փուկին շրթները իրար կպչած են, և եթէ ետեւէն դէպի առաջ երկու մատներով առնանդամը քիչ մը սեղմենք, դեղին կամ ճերմակ կաթիլ մը հեղուկ կը նըշմարուի:

Օրուան մէջ գրեթէ վաղուք չկայ. բայց ենթական եթէ քիչ մը շատ յոգնի կամ ոգելից ըմպելի գործածէ, կամ նոյնիսկ զրգուիչ մոռւնդ մը առնէ, վաղուքին քառակութիւնը կը շատնայ և ամբողջ միզանցքին երկայնքը կը զգայ թեթև այրումներ, խրատումներ, մասնաւորապէս միզելու ատեն քերութուք. նշաններ՝ ուրո՞ւ խիստ փոփոխական են ուժի և ժամանակի տեսակէտով:

Մէզը կրնայ ըլլալ պղտոր, պարունակելով նուրբ, երկար, թեթև, թելուտ կամ փորած մասնիկներ, ինչ որ շիթախտի կարեւոր նշաններէն մէկն է:

Որչափ ատեն որ մէզը պարունակէ այս տարրերը, յերմամիզութիւնը դեռ բոլորովին չէ բժշկուած:

Երբեմն ենթական կը միզէ ստէպ ստէպ և կարող չէ մէզը միզարանին մէջ բռնելու և միզած ատեն ալ ցաւեր ու այրումներ կը զգայ:

Նմանապէս սերմուահոսութեան ժամանակ ալ կիզումներ կ'ունենայ և շատ անգամ ալ սերմը թեթեւորէն արիւնով ներկուած կ'ըլլայ:


Շիթախտը խիստ շատ տարածուած է և սակայն քիչեր գիտեն անոր անհատական և ընկերական ահոեւլի վտանգները:

Այս հիւանդութիւնը ենթական ընդհանրապէս շատ չի նեղելուն պատճառաւ՝ անիմնամ թողուած է: Շիթախտին անհատական հետեւանքները արդէն տեսանք:

ասոնք էին միզանցքին անձկութիւնը, շագանակագեղատապը, յօդացաւը, ևայլն, ևայլն:

Ժամանակ մը կը կարծուէր թէ անգամ մը որ ջերմամիզութիւնը քրոնիկ վիճակի վերածուէր՝ փոխանցիկ չէր այլեւս: Սակայն հազարաւոր օրինակներ հակաչը ապացուցած են, Ամուսնութեամբ նորապսակուակը ապացուցած են, Կինում մինչև այն ատեն շատ առողջ և բնաւ հիւանդ կիներ՝ մինչև այն ատեն շատ առողջ և բնաւ հիւանդ աշեղած՝ վարակուած են շիթախտ ունեցող իրենց ամուսինէն, և այսպէս՝ անմեղ, խեղճ երիտասարդ կիներ ամիսներով, տարիներով կը նիշարնան, կը տառապին, ամուսին ունեցող կը նիշարնան, կը փտին և ուշակու կը նիշան. ումանք անկողնին մէջ կը փտին և ուշակու կը նիշան. ումանք անկողնին մէջ կը փտին և ուշակու բիշներ ամենածանը վիրաբուժական գործողութիւններու ենթակայ կ'ըլլան:

Պէտք է լրջօրէն դարմանել տալ շիթախտը և ամուսնանալ միմիայն կատարելապէս բժշկութենէն մը վերջ:



## ԱՅՐ ՄԱՐԴՈՒՆ ԶԵՐՄԱՍԻԶՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆԸ

Զերմամիզութիւնը դարմանելու համար հին ա-  
տեններէ ի վեր ժողովրդական, փորձառական և զի-  
տական այնքա՞ն միջոցներ և դեղեր առաջարկուած և  
գործածուած են որ՝ միայն անոնց անուանական թուրումը  
հատորներ պիտի լեցնէր:

Իր սուրբ վիճակին մէջ ջերմամիզութիւն մը լաւ  
խնամուելով միշտ կը բժշկուի. սակայն ամենագիտա-  
կան և ամենակատարեալ դարմանն անգամ սպասուած  
արդիւնքը չի տար՝ եթէ ենթական չհետեւի առողջա-  
պահական և սննդառական որոշ կանոններու։ Համա-  
ռատակի խօսինք անոնց վրայ։

Ա. Զերմանէզին առողջապահութիւն

Ահա՝ ջերմամիզութենէ վարակուած անհատի մը առողջապահական պարտականութեանց համառօտ տառնաբանեան,

1. — Կարելի եղածին չափ կատարեալ հանդիսա  
մը ստիպողական է:

2. — Երկար պտոյտներէ, հեծանիւէ, ձի հեծնաւէ, կառքով և շողեկառքով երկար ճամբորդութիւններէ զգոյշ մնալ:

3. — Կատարեալ բժշկութենէ առաջ բոլորովին խոյս տալ կնոջ հետ սեռային յարաբերութենէ կամ սեռային զրգութամներու տեղի տուող պատճառների։

4. — Գիշերները կանուխ պատկիլ և առաւտուն  
առթնայուն աէս անկողինէն ելլել:

5. — Մակամորձատապի ենթակայ չըլլալու համար, ջերմամիզութեան ախտանիշներուն երեւան ելքուն պէս՝ փոշտակալ (*suspensori*) գործածել:

6. — Ծաբաթը մէկ կամ երկու տաք լոգանք  
առնել՝ որոնք ցաւերը նշանակելիօրէն կը մեղմացնեն  
և արինը կը վանեն, նամանաւանդ երբ ջուրը գազջ  
է. Դոգանքը միեւնոյն տատեն սեռային գործարանները  
մաքրելու կը նպաստէ:

7. — Իւրաքանչիւր դարմանէ վերջ ձեռքերը օ-  
ճառով լաւ մը լոււալ՝ թարախոտ մատներով աշխերը  
չվարակելու համար:

84. — Առաւտու և երեկոյ եռացած կամ թեթև  
հականէիսիչ պարունակող ջուրով մը անպայման առ-  
հանուամբ լուաւ և լաւ մը չորցնել:

9. — Ճերմակեղէնսիրը չալտոտելու համար թրլ-  
փառին (précipice) և ծեփուկին (gland) մէջտեղ դնե-  
քիչ մը բաճպակ և ամէն անդամ որ թրջի կամ աղ-  
տոտի՝ փոխել և մաքուրը դնել:

10. — Պէտք է մինակ պառկիլ և միհւնոյն ան-  
կողնին մէջ բնաւ աղայ չառնել, նամանաւանդ պզտիկ  
աղջիկները:

Բ. ՍԵՅՎԱՆՈՒՐԻՆ

Ջերմամիզութիւնը երեւան գտնուն պէս, ենթա-  
կան պէտք է բացարձակապէս զգուշանայ զործածելի-  
կութից ըմպելներ.— սուրբ, թէյ, համեմներ (պղպեղ  
մասնակիս ևայլն), կծու բանջարեղիչներ (լոլիկ, կա-  
նաչ աղցան, ծներեկ), խեցեմորթներ, պահածոյ մի-  
(ապուխտ ևայլն), կծու պանիր, ևայլն, ևայլն:

Պէտք է առատօրէն գործածէ կաթ, թեթև լիմոնատա, բուսաջուրեր, կաթով սուրճ, ալկալիան ջուրեր, և այլն:

Ենթական կրնայ ծիսել, առանց սակայն չափազանցելու:

## Գ. Զերմանիզութեան բուն դարմանը

Երկու պարագաներ կրնան պատահիլ :

1. — Հիւանդը բժիշկն ձեռքով կը գարմանուի:  
2. — Հիւանդը ստիպուած է ո և է պատճառով  
մը մինակը գարմանուի:

Հիւանդին դարմանը բժիշկին ձեռքու

Երբ ջերմամիզութիւնը իր մկղբնաւորութեան մէջն է և դեռ սուր վիճակ մը չէ առած, այսինքն վարակման առաջին 3-4 օրերուն, պէտք է անմիջապէս մասնագէտի մը դիմել, որը մանրադիտակով եթէ ջերմամիզութեան մանրէին գոյութիւնը ստուգէ, պիտի կըրսայ 8-10 օրէն հիւանդութիւնը վիժել տալ և իր ըսկըզբնաւորութեան մէջ խոկ խեղդել: Խոկ եթէ մանրէն չգտնուի, այն է որ ջերմամիզութիւն չէ և ենթական կրնայ հանդիսաւ սրտով մեկնիլ և ապահով ըլլալ թէքիչ օրէն պղոտիկ դարմանով մը պիտի ոժիկանի:

Խնդիր է այսմ գիտնալ թէ՝ ջերմամիզութիւնը  
վիճել ապահով համար ամենէն ապահով միջոսն ո՞նք է,

Ամենէն լաւ և դիւրին միջոցն է ժանէի զրութեամբ առատ սրսկումով մեծ լոգանքը (grand lavage), permanganate de potasseի 0,25 սանթիկրամ առ հազար ջուր համեմատութեամբ :

Այս միջոցը լաւ արդիւնք կուտայ : Նախ օրը երկու անգամ, առաւօտ և երեկոյ, 4 օրի չափ . մետք

օրը անդամ մը , մինչև որ բոլոր ախտանիշները անհետին :

Ենթական փոքրիկ վարժութիւնով մը կրնայ նոյն-իսկ առանձինն ալ ընել այս սրակումները:

Բայց երբ ջերմամիզութիւնը սուր վիճակին հասած է, ցաւերը խիստ են, հոսումք՝ առատ և միզանցքն ալ բորբոքած, մեծ լուացումները աւելի վնասակար են քան օգտակար: Պէտք է նկատի ունենալ որ Ընդհանրապէս հիւանդներն ալ բժիշկին կը զիմն, երբ հիւանդութիւնը այս սուր վիճակին հասած է: Այս պարագային, աւելի խոհեմութիւն է և լաւ կ'ըլլայ սպասել որպէսզի սուր վիճակը անցնի, գոհանալով միմիւան ներսէն գործածումը հետեւեալ գեղերուն.

Bicarbonate de soude, salicylate de soude, urotropine, միզեցնող բուսաջուրեր (chiendent, stigments de maïs, queue de cerise և այլն), 15-20 օր վերջ միայն սկսելու է հականեիրիչ և մանրէասպան լուազումները:

Եթե ինչու ասեալուած է մինակը դարձանուի

Առողջապահական միջոցները միշտ աչքի առջև ունենալով՝ կէտ առ կէտ գործադրելու է հետեւեալ միջոցները.

Ներսէն պէտք է օրը 3 անգամ առնել 0,50 մց-tropine կամ helmitol: Նմանապէս 24 ժամուան մէջ խմել 1-2 լիտրա հետեւեալ բաղադրութենէն.

*Bi-carbonate de soude 4 gr*

*Salicylate de soude*

Nitrate de potasse

Ամէն օր, 3-4 անգամ պղտիկ գրեխով մը ներարկել առանդամին մէջ հազարին 0,25 համեմատութեամբ permanganate de potasseի լուծաջուր:

Եւրաքանչիւր ներարկումէ առաջ ենթական պարտի նախ միզել, և ասիկա՛ շատ կարեւոր է և բնաւ պէտք չէ մոռնալ:

Կարելի է նաև միեւնոյն համեմատութեամբ *per mangante de potassei* լուծաջուրէն 500 կամ 1000 կրամով մեծ ոսոգիչ գրեխի միջոցով (*irrigateur*) լուացում ընել, պայմանաւ որ լուծաջուրը շատ ներս չերթայ միզանցքին մէջ, միայն միզանցքին առաջին մասը մէկ կողմէն կը լուայ և մէկ կողմէն կը վաղէ:

Երբ 15-20 օր վերջ, վաղուքը պակսի, մէզը պըղատոր ըլլալէ դադրի, այն ատեն միայն և միմիայն այն ատեն պէտք է գործածել *balsamiqueনেৰৰ* (*santal, copahu, gonosan, arrhéol কাজেন*):

Թօնչակս կարելի է նաև նաև բէ՛ նոր կամ եին ջերմամիգութիւն մը բժেկուած է:

Եթէ մէկը ջերմամիզութենէ մը բժշկուած է՝ պէտք է որ հետեւեալ պայմանները ներկայացնէ.

1. — Հակառակ անոր որ այլեւս դարձան տեղի չունենար. վաղուքը դադրած է:

2. — Մէզը մաքուր է և չի պարունակեր թելուակամ փորած մասնիկներ:

3. — Խոչորացոյցը ջերմամիզութեան մասրէն չի ցուցներ:

4. — Յոգնութենէ, ոգելից լմպելիներու գործածումէ, առատ կերակուրէ մը վերջ, վաղուքը երեւան չելիներ:

Այս պայմաններուն իրագործումէն վերջ ենթական բժշկուած է և կրնայ ամուսնանալ կամ ինքինքը մաքուր նկատել:



## ԶԵՐՄԱՄԻՋՈՒԹԻՒՆԸ

### ԿՆՈՉ ՔՈՎ

Կնոջ ջերմամիզութիւնը ա'յնքան ընդհանրացած է՝ որքան այր մարդունը. սակայն անհատական և ընկերացին տեսակտով՝ կնոջ ջերմամիզութիւնը շատ աւելի կարեւոր է:

Կնոջ ծննդամիզական զանազան գործարաններու դրացնութիւնը և սերտ յարաբերութիւնները, անսնց մասնաւոր բնախօսական գործունէութիւնները, միզանցքին կարծութիւնը կը բացատրեն կնոջական ջերմամիզութեան մասնաւոր կերպարանքը և կարեւորութիւնը: զութեան մասնաւոր կերպարանքը և կարեւորութիւնը: Արդարեւ կնոջ քով ջերմամիզութիւնը դիւրաւ և գրիթէ Արդարեւ կնոջ քով ջերմամիզութիւնը դիւրաւ և գրիթէ թիթեւ երեւոյթին՝ երկար ժամանակ տարափոխիկ է:

Ինչպէս այր մարդուն քով, հոս ալ կարելի է զանազանել երկու ձեւեր:

1. — Սուր ջերմամիզութիւնը,

2. — Հինցած ջերմամիզութիւնը՝ որ կը կոչուի արդանդային քրոնիկ ջերմամիզութիւն:

Անոջ սուր Ջերմամիզութիւն:

Հիւանդութեան սկզբնաւորութեան նշաններն են՝ այրուք, քերուըտուք, բունոցին շրթներուն վրայ քիչ այրուք, քերուըտուք, բունոցին շրթներուն վրայ քիչ այրուք. նոյնիսկ հպումը երբեմն ա'յնքան ու շատ այրում. նոյնիսկ հպումը անկարելի սուր ցաւեր կը պատճառէ որ՝ մերձաւորումը անկարելի կ'ըլլայ: Նոյնպէս ստէպ միզելու փափաք, խիստ

ցաւեր, ինչ որ արդիւնք է միզանցքին բորբոքման: Յետոյ կը սկսի վազուք մը՝ որ կ'աղտօտէ ձերմակեղնաները. սկիզբէն այս վազուքը դեղին է, յետոյ կանաչորակ դեղին գոյն մը կ'առնէ և քանակիութիւնն ալ կ'աւելնայ: Ազգրին ներքին կողմերը, սրբանին եզերքները կը բորբոքին, այնպէս որ երբեմն քալելու անգամ արգելք կ'ըլլան:

Վերջապէս արդանդը, խորժապին, գրացի գեղձերը  
հետզհետէ շռատով կը բորբոքին :

կնոջ ջերմամիզութիւնը ուրեմն այր մարդունին  
պէս միմիայն միզանցքին վրայ հաստատուելով չի գո-  
հանար, այլ կամաց կամաց դրացի դործարաններն ալ  
կը վարակէ:

Կնոջ ջերմամիզութեան սուր վիճակը կը տեւէ մօ-  
տաւորապէս մէկ շաբաթ և յետոյ քիչ ու շատ կը թե-  
թեւնան նշանները, անշուշտ պարագային և դարձանին  
համեմատ :

Երբեմն առարկայական նշանները՝ այսինքն ցաւ և  
այրում՝ կամաց կամաց պակսելով և ջնջուելով, կինը  
կը կարծէ թէ բոլորովին ապաքինած է, ունենալով  
միմիայն աննշան սպիտակ վազուք մը և դաշտանի օ-  
րերուն անորոշ, թեթև ցաւերը: Այս վիճակին մէջ սա-  
կայն կընայ դարձեալ ջերմամիզութիւն փոխանցել այր-  
մարգուն՝ առանց իսկ կասկածելու, ինչպէս որ օրի-  
նակներ չեն պակսիր:

## Արգանդային Զերմանիզութիւն

Ինչպէս այր մարդուն, նոյնպէս ալ կող ջերմա-  
միզութիւնը թերի կամ ոչ-գիտական խնամքի հետե-  
ւանքով քրոնիկ վիճակ կը ստանայ կարձ ժամանակ-  
ուան մէջ։ Հեւանդութիւնը մակերեսային գործարան-

Ներէն կը փոխանցուի ներքին, խորունկ գործարան-  
ներուն մէջ, որով միքրոպասպան նիւթերու ազդեցու-  
թենէն կը հեռանայ տակւ:

Զերմամիզութեան մանրէն միզանցքին մէջ չէ,  
այլ արգանդին մէջ անցած է և հիւանդութիւնը մի-  
զանցքային չերմամիզութենէ դադրելով՝ կ'ըլլայ ար-  
դանդայիլն , ինչ որ անհատական և ընկերային խիստ  
մեծ վտանգներու ծնուռնդ կրնայ տալ :

Անգամ մը որ արգանդը բորբոքած է, յաւիտե-  
նականապէս կը տեսէ, եթէ լուրջ, երկարատև խնամք-  
ներ չըլլան :

## ԱՐԴԱՆԴԱՄԱԳԻՆ ՆՀԱՆՆԵՐՆ ԵՆ

1. — Վաղուքը առատ է, մասնաւորաբար դաշտանի օրերուն. դաշտանն ալ շատ անդամ անկանոն է և գաւոզ տեղի կ'ունենայ:

2. — Փորի և մէջքի առաւել կամ նուազ ցաւեր՝  
որոնք սակայն միշտ պյութիւն ունին:

3. — Հիւանդութիւնը երբեմն երբեմն ու և է  
պատճառով սուր վիճակ մը կը ստանայ, առաջ քերելով  
տաքութիւն, փորին մէջ խիստ սուր ցաւեր. յետոյ  
հանդարտութիւն մը կը յաջորդէ՝ որուն կրնայ կրկին  
սուր վիճակ մը հետեւիլ և ենթական չի խորհիր խիկ  
թէ հին հիւանդութեան մը զարթումն է: Երբեմն նոյն  
իսկ բժիշկները չեն կասկածիր և ուրիշ հիւանդութիւն  
մը կը փնտռեն կնոջ վրայ:

**Արամանակի ցերմամիզուրիան կնքութեալիները**

Կանացի հիւանդութեանց մեծ մասը արդիւնք է կանացի հիւանդութեան վարակումի: Կիներու սպիտակ հոգիրմամիզութեան պարագաներու (perle blanche), որ կարեւորութենէ զուրկ նըստումը (perle blanche), որ կարեւորութենէ զուրկ նըստումը է և կամ կը վերագրուի յոգնութեան, ակասուած է և կամ

Նարիւնութեան, մարմնական տկարութեան, գէշ մարսողութեանց, և այդ նպատակով ալ կը խնամուի՝ ուժի և ստամոքսի գեղերով, չատ ատեն պարզապէս ջերմամիղութեան արդիւնք է:

Դժբախտաբար կարդ մը կիներ անտարբերութեամք  
և յաճախ անգիտակցութեամք կը նային իրենց վազու-  
քին վրայ, որը անխնամ ձգելով վարակումը կը տա-  
րածուի, մինչև որ հասնի արդանդին, հաւկիթներուն,  
փորամաշկին (péritoine), և երբ օրին մէկը ցաւերը  
սաստկանան, անտանելի և անհանդուրժելի դառնան,  
հոսումը խիստ առատ ըլլայ և բժիշկի մը զիմեն,  
ա-  
զատելու միակ միջոցը կ'ըլլայ լուրջ և խիստ ծանր-  
վիրաբուժական գործողութիւն մը: Պէտք կ'ըլլայ փորը  
բանալ և հիւանդ գործարանները անդամահատել (ար-  
դանդ, հաւկիթ ևայլն) և կինը քիչ առաջ առողջ և  
կայտառ՝ կ'ըլլայ անկարող կամ ցաւագար մէկը:

Զերմամիզութեան մանրէն ուրեմն միմիայն արդանդի բորբոքում առաջ բերելով չի գոհանար : Հաւկիթներուն մէջ հասնելով կ'ունենանք ձուարանափողատապ (salpingo-ovarite), ձուարանատապ (ovarite), փորամաշկին (péritoine) մէջ՝ փորամաշկատապ (péritonite), Պառթոլէնի գեղձատապ, փամիշտատապ, երիկամատապ, յօդատապ, աչտատապ ևայլն : Ասոնց վըրայ պէտք է աւելինել կնոջնկան մասնաւոր գործունէութեան կնճռոտութիւններ, որոնք են՝ վիճում, ամլութիւն, նորածիններու աչացաւ, վերջինս՝ միակ պատճառը կոյր ծնող տղող :

ԿԱՅՈ ԱՆԻ ՉԵՐՄԱԿԻՎԱՐՔԱՆ ՊԱՐՄԱՆ

Այլու մարդուն պէս կինն ալ միեւնուն և անոնաս ու

Քութեամբ և խստութեամբ հետեւելու է առողջապահական և մննդական կանոններում։

Հակած և սուբդուլտ է .  
Հականեխական դարմանը անմիջական ըլլալու է .  
ասոր համար հաղարին 0,50 համեմատութեամբ per-  
manganate de potasseի լուծաջուրով խորոճային լուա-  
լու է : Զուրը պէտք է ըլլայ տաք և գոնէ մէկ լիտրա-  
քանակութեամբ և օրը երկու անգամ , առաւօտ և ե-  
րեկոյ :

Եթէ ցաւերը սուր են, երիցուկի (camouille, պալմարիա) և տուղտի (guittauve, կիվլայարիկ) արմատներու լուծաջուրի գործածութիւնը լաւ արդիւնք կռապա, ինչպէս նաև՝ որչափ կարելի է հանդասութիւնը:

Ներսէն ալ կարելիէ տալ ալիալինսէր (bicarbonate de soude և salicylate de soude), միզեցուցիչ և հականեխիչ դեղներ (urotropine), և վերջին օրերն ալ բալսամիկ (santal, arrhéol և այլն):

Երբ հիւանդութեան սուր նշանները արդէն դադ-  
լած են, կինը դարձեալ և երկար ժամանակ պարտի-  
չարունակել լուացումները, և, առանց բժիշկի խոր-  
հուրդին, պիտի չդադրեցնէ և ինքզինքը բժշկուած  
պիտի ճնկատէ:

Արամանակի քափի տերմամիզութեան դարմանը

Երբ արգանդային չերմամիզութիւնը քրոնիկ վիճակի կ'անցնի, բժիշկը միայն կրնայ խնամել. առ այդ հարկում մը միջոցներ (*cautérisation*, տեղական նեկան շատ մը միջոցներ, արգանդային լուսացք, ընդլայնում ևայլն): Մարկումներ, արգանդային լուսացք, ընդլայնում ևայլն):

## ՏՂՈՑ ԶԵՐՄԱՄԻՋՈՒԹԻՒՆԸ

Տղոց քով ալ այրերու և կիներու պէս, հիւանդութիւնը արդիւնք է ջերմամիզութեան միքրոպին միւղանցքին մէջ հաստատուելուն:

Մանչ տղոց քով արդիւնք է, կա՛մ ոճրափորձութեան և կամ վաղահաս սեռային յարաբերութեան կրոջ մը հետ՝ որ ջերմամիզութիւն ունի արդէն:

Սխտանիշները միեւնոյնն են, սակայն աւելի դիւրաւ կը բժշկուի և շատ հազուագէպօրէն քրոնիկ վիճակի կը վերածուի:

Հիւանդութիւնը կը սկսի ծեփուկի խիստ մեծ բորբոքումով մը:

Պղտիկ աղջիկներուն ջերմամիզութիւնը ընդհանրապէս կը փոխանցուի. այդ հիւանդութիւնը ունեցող մօր մը անկողնին մէջ պառկելով:

Հոռ ալ միեւնոյն ախտանիշները զոյսութիւն ունին, սա տարբերութեամբ միայն որ հիւանդութիւնը շատ բացառաբար արգանդին մէջ կը հաստատուի:

Պղտիկ տղոց ջերմամիզութեան դարմանը մեծերու դարմանին յարեւնման է, միայն թէ տղոց վրայ աւելի փափկութեամբ շարժելու է:



## ՍԱՆԻԱԶԳՈՒԾԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ

Նախորդ էջերուն մէջ ջանացինք համառօտակի բացատրել թէ՝ ի՞նչպէս կարելի է դարմանել ջերմամիզութիւնը, և յիշեցինք նաև թէ՝ անհրաժեշտ է չուտով և կանոնաւորապէս դարմանել:

Բայց աւելի լաւ պիտի ըլլար ջերմամիզութենէ չի վարակուիլ: Կա՞ն արդեօք կանխազգուշական միջոցներ՝ ջերմամիզութենէ զերծ մնալու համար. —

Այո՛, երկու տեսակ միջոցներ կան.

1. — Հասարակական կանխազգուշական միջոցներ  
և 2. — Անհատական կանխազգուշութիւններ:

**Հասարակական կամ Պատօնական կանխազգուշութիւններ**

Տեսանք թէ ջերմամիզութիւն առաջ կուգայ՝ երբ մասնաւոր միքրոպ մը (կոնոքօք)՝ միզանցքին մէջ հաստատուի:

Որպէս զի ջերմամիզութիւնը երեւան ելլէ, ոկտաք ուրեմն որ առնանգամը հաղորդակցութեան մտնէ հիւանդուն ուրեմն անդամի մը հետ: Հիւանդութիւնը ջնջելու համար՝ այդ վարակիչ միջոցը պէտք է ջնջել, այսինքն հիւանդները մեկուսացնել, հսկողութեան առաջ և բժշկել:

Այս պատճառով է որ կառավարութիւնները, քաղաքակեառութիւնները շարաթը մէկ-երկու անգամ բըժժակական քննութեան կ'ենթարկեն հասարակաց կեները, սէր վաճառողները:

Բայց քանիներ կան ասոնց քով և շատ ժամանակ

ամուսնացած կիներ, որոնք բոլորովին զերծ ամէն տեսակ հսկողութենէ, գաղտագողի յարաբերութիւններով ջերմամիզութիւնը կը տարածեն չորս կողմ։ Կառավարական հսկողութիւնները, օրէնքները բնաւ փրկարար արդիւնք մը չեն տուած և պէտք չէ անոնցմէ մեծ բան մը սպասել։

#### Սնիածական կանխազգոււուրիւններ

Ամէն անհատ պէտք է այս կանխազգուշական միջոցները լաւ ճանչնայ և կանոնաւորապէս գործադրէ՝ ո՛չ միայն կասկածելի, այլ նաև ամէն պատահական սեռային յարաբերութիւններու ժամանակ։

Ահա՝ առնց համառօտ մէկ ցանկը.

1. — Կինը ամէն յարաբերութենէ առաջ պարտի լաւ մը լուացուիլ թեթև հականեխիչ պարունակող կամ լաւ մը եռացած՝ զաղջ չուրով։

2. — Սեռային յարաբերութեան միջոցին, այր մարդը պէտք չէ շատ գրգռուի և սերմուահոսութիւնն ալ գիտմամբ չուշացնէ։

3. — Յարաբերութենէ անմիջապէս առաջ, առնանդամին վրայ օծանել Մէջնիքովի հետեւեալ բաղադրութիւնը։

*Calomel 1 gr.*

*Vaseline 3 gr.*

4. — Սեռային գործողութիւնը աւարտելուն պէս՝ պէտք է *sublîmément* կամ հականեխիչ ուրիշ լուծաջուրով առնանդամբ, լաւ մը լուալ։

5. — Անմիջապէս միզել և միզած ժամանակ ծեփուկը սեղմելով երբեմն երբեմն միզելը արդիլել՝ որպէսզի միզանցքը ընդլայնելով մէզը ամէն ծակոտիկ-


ներուն մէջ մտնէ, լուայ և հոն եթէ միքրոպներ գըտնուին՝ մէզը դուրս քշէ։

6. — Կարելի է նաև սեռային յարաբերութեան ժամանակ գործածել պահպանակ (քօնտօմ)՝ շինուած լասթիկէ կամ ընդերամաշկէ (baudruche)։

Սակայն շատեր չեն ուզեր պահպանակ գործածել, որովհետև զգացողութեան արգելք կ'ըլլայ։ Ricord ըսած է «Պահպանակը մամուկի ոստայն մըն է վտանգին դէմ և զրահ մը՝ սիրոյ դէմ»։

7. — Յարաբերութեան հետեւեալ օրերը ենթական ուշադրութեամբ դիտելու է առնանդամը և առաջն առթիւ որ պզտիկ բորբոքում մը երեւան դայ, և միզած ժամանակ՝ թեթև այրուք մը, ցաւ մը զգալի ըլլայ՝ անմիջապէս պէտք է դիմել մասնագէտ բժիշկի մը, որով հիւանդութիւնը դեռ յառաջ չգացած վիճել տալ։

Վ Ե Ր Զ



# ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1. ՆՈՐԱԾԻՆՆԵՐՈՒ Ա.Ո.Ո.Դ.ԶԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ (Սպառած)
2. ԱՐԱՐԻՉԼ ԳԻՏՈՒԹԵԱՆ Ա.Ո.ԶԵՒ (Բ. տպագր. մամուլի տակ)
3. ԶԵՐՄԱՄԻՉՈՒԹԻՒՆԸ
4. ԹՈԲԱԿԸՆԸ (Մամուլի տակ)
5. ՍԻՖԻԼԻՍԸ (Մամուլի տակ)
6. ԿՐՕՆԸ ԵՒ ԲԱՐԵՇՐՁՈՒՄԸ (Թրգմ.)
7. ՎԱԽԸ (Մօսյի, [Թրգմ.])
8. ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ
9. ՏԱՐԵՐՔ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
10. ՊՏՈՅՏ ՄԸ ՍԵՆԵԱԿԻՍ ՇՈՒՐՁԼ (Թրգմ.)
11. ՏԱՐՎԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ
12. ՏԱՐԵՐՔ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ
13. ՍԵՐԸ (Բնապատճական և բնագանցական ուսումնասիրութիւն)



## Ց Ա Յ Ա

ՑԱՐԱ.ԶԱ.ԲԱ.Ի . . . . .	3
Ամօթալի՛ հիւանդութիւն . . . . .	5
Պատմական . . . . .	8
ԱՅՐ ՄԱՐԴՈՒՆ ԶԵՐՄԱՄԻՉՈՒԹԻՒՆԸ . . . . .	11
Մօտաւոր եւ հեռաւոր կնճռոսութիւնները . . . . .	14
Գեղձաբորբոքում . . . . .	15
Ծեփուկի բորբոքում . . . . .	15
Մսաբուսութիւն . . . . .	16
Փամփշտատապ . . . . .	16
Կաստանիկի բորբոքում . . . . .	17
Ամործատապ . . . . .	18
Միզանցքի անձկութիւն . . . . .	20
Զերմամիզային յօդացաւ . . . . .	20
Զերմամիզային աչացաւ . . . . .	21
Սրբանային զերմամիզութիւն . . . . .	22
Զզային անկարգութիւններ . . . . .	22
Քրոնիկ զերմամիզութիւն . . . . .	26
ԱՅՐ ՄԱՐԴՈՒՆ ԶԵՐՄԱՄԻՉՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆԸ . . . . .	26
Զերմագէզին առողջապահութիւնը . . . . .	27
Անոդառութիւն . . . . .	28
Զերմամիզութան բուն դարմանը . . . . .	28
Հիւանդին դարմանը բժիշկին ձեռքով . . . . .	29
Երբ հիւանդը ստիպուած է մինակը դարմանուիլ . . . . .	30
Հիւանդութեան անհետացման նշանները . . . . .	31
ԶԵՐՄԱՄԻՉՈՒԹԻՒՆԸ ԿՆՈԶ ՔՈՎ . . . . .	31
Կնոզ սուր զերմամիզութիւն . . . . .	31

Արգանդային զերմասմիզութիւն . . . . .	32
Կնճռոտութիւններ . . . . .	33
Սուր զերմամիզութեան դարմանը . . . . .	34
Արգանդային քրոնիկ զերմամիզութեան դարմանը	35
ՏԳ.ԱՅՑ ԶԵՐՄԱՄԻԶՈՒԹԻՒՆԸ . . . . .	36
ԿԱՆԿԱԶԴԻՌՀԱԿԱՆ ՄԻԶԱՑՆԵՐ . . . . .	37
Հասարակական կանխսպազական միջոցներ . . . . .	37
Անհատական կանխսպազական միջոցներ . . . . .	38





ՀՀ Ազգային գրադարան



NL0289012

## ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

1. ՆՈՐԱԾԻՆՆԵՐՈՒ Ա.Ո.ՊԴ.ԶԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ (Սպասութիւն) 10
2. ԱՐԱՐԻՉԼ ԳԻՏՈՒԹԵԱՆ Ա.Ռ.ՉԵՒ, Բ. Տպագր. (Մամուլի տակ) 10
3. ԶԵՐՄԱՄՄԻՉՈՒԹԻՒՆԸ 7, 10
4. ԹՈԹԱԿԱՏԸ 10
5. ՍԻՖԻԼԻՍԸ (Մամուլի տակ)
6. ԿՐՕՆԸ ԵՒ ՅԱՐԵՇՐՉՈՒԹԸ (Թարզեց.)
7. ՎԱԽԸ (Մասոյի [Թարզեց.])
8. ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓԵԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ
9. ՏԱՐԵՐՔ ԵՐԿՐԱԳՈՐԸ ԹԻԹԻԱՆ
10. ՊՏՈՅՏ ՄՀ ՍԵՆԵԱԿԻՆ ՇՈՒԲՉԼ (Թարզեց.)
11. ՏԱՐՎԵՆԱԿԱՆԱՌՈՒԹԻՒՆ
12. ՏԱՐԵՐՔ ՓԵԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ
13. ՄԵՐԸ (Յնազամական եւ բնագավական ուսումնականութիւններին)

 ԳԻՆ 10 ՀՐԸ. 

## ԿԵՐԵՐՈՆԱՏԵՐ ԿԻԼԻԿԻԱ ԳՐԱՏՈՒՆ

37, Գաղպիսթան Փողոց

ԲԵՐԱ—Կ. ՊՈԼԵԱ

57, La Belle Ave., H. P.

(U. S. A.)

DETROIT, MICH.

Կը գտնուի նաև բոլոր հայ զրագաւառներուն մօտ: